# ԵԼՔ ՓՆՏՐԵԼ ՄԻԱՍԻՆ

Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեն և խաղաղության սովետական ֆոնդը ընդունել են Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, երիտասարդությանը, պատերազմի և աշխատանքի վետերաններին, մշակույթի վարպետներին, գիտական ու կրոնական գործիչներին՝ երկու հանրապետությունների խաղաղարարական շարժման բոլոր մասնակիցներին ուղղված դիմում՝ կոչ անելով անելու իրենց ծանրակշիռ խոսքը, որ մարդկանց այնքան հարկավոր է այս բարդ ժամանակներում:

Առաջնահերթ խնդիրը իրադարձությունների ողբերգական ընթացքը կանգնեցնելն է, ասվում է փաստաթղթում: Փոխադարձ շատ վիրավորանքներ ու մեղադրանքներ են կուտակվել: Միանգամից դրանք չես վերացնի: Բայց պետք է նայել ոչ թե անցյալին, այլ ապագային: Դրա համար հարկավոր է հաղթահարել հույզերը և համատեղ երկխոսություն սկսել բարյացակամ ոգով:

Այսօր ամենասուր խնդիրը գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալն է: Խաղաղության սովետական շարժումը այդ ուղղությամբ կոնկրետ ջանքեր է գործադրում: Խաղաղության սովետական ֆոնդի միջոցներից մեկ միլիոն 200 հազար ռուբլի է հատկացվել անօթևան մնացած ադրբեջանական և հայ ընտանիքներին անհապաղ օգնություն ցույց տալու համար: Ադրբեջանի և Հայաստանի խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեները ու խաղաղության ֆոնդի բաժանմունքները երկու հանրապետությունների խաղաղության շարժման բոլոր ակտիվիստները պետք է մարդասիրություն և գթասրտություն ցուցաբերեն իրենց բնակարանները լքած մարդկանց հանդեպ, նրանց շրջապատեն հոգատարությամբ և ուշադրությամբ:

Այժմ չկա ավելի սուրբ ու ազնիվ բան, քան միմյանց ընդառաջ գնալ, - ընդգծվում է դիմումի մեջ:

(ՏԱՍՍ)

# ИСКАТЬ ВЫХОД ВМЕСТЕ

Советский комитет защиты мира и Советский фонд мира приняли обращение к труженикам Азербайджана и Армении, к молодежи, ветеранам войны и труда, мастерам культуры, научным и религиозным деятелям — ко всем участникам миротворческого движения обеих республик с призывом сказать свое веское слово, столь нужное людям в это сложное время.

Первостепенная задача — остановить трагический ход событий, говорится в документе. Много накопилось взаимных обид и обвинений. Их одним махом не устранить. Но надо смотреть не в прошлое, а в будущее. Для этого нужно перешагнуть через эмоции и начать совместный диалог в духе доброй воли.

Острейшая проблема сегодня — оказать незамедлительную помощь переселенцам. Советское движение за мир предпринимает конкретные усилия в этом направлении — из средств Советского фонда мира выделено один миллион двести тысяч рублей на неотложную помощь азербайджанским и армянским семьям, оставшимся без крова. Республиканские комитеты защиты мира и отделения фонда мира Азербайджана и Армении, все активисты движения за мир обеих республик должны проявить гуманизм и милосердие к людям, покинувшим свои жилища, окружить их заботой и вниманием.

Нет ничего более святого и благородного сейчас, чем начать движение навстречу друг другу, подчеркивается в обращении.

(ТАСС).